Ռեսուրսների միջազգային շարժը

Մինչ այժմ դիտարկված մոդելներում ռեսուրսները համարվում էին կատարյալ ոչ շարժուն երկրների միջև: Ստորև անդրադառնում ենք ռեսուրսների միջազգային շարժի հետևանքներին:

Ընդհանուր դեպքում աշխատուժի, ինչպես նաև կապիտալի շարժը պայմանավորված է ոչ միայն տնտեսական, այլև՝ քաղաքական, իրավական, կրոնական, էթնիկական և այլ դրդապատճառներով: Դիտարկվող մոդելում, սակայն, ի նկատի է առնվում ռեսուրսի շարժի միայն տնտեսական շարժառիթը:

Աշխատուժի միջազգային շարժը

Աշխատուժի միջազգային շարժը թեպետ բոլորովին էլ նոր երևույթ չէ, սակայն ներկայումս համաշխարհային տնտեսության բնութագրիչ առանձնահատկություններից է: ՄԱԿ–ի գնահատմամբ 2005թ–ին ներգաղթողների ընդհանուր թիվը երկրագնդում կազմում էր 190մլն. մարդ, որի գրեթե մեկ քառորդը բաժին էր ընկնում Հյուսիսային Ամերիկային, իսկ մեկ տասերորդը՝ Արևմտյան Եվրոպային: Իսկ մեկ շնչի հաշվով ներգաղթողների թվով ամենից բարձր ցուցանիշն ունի Կանադան:

Աշխատուժի միջազգային շարժի ազդեցությունը համաշխարհային եկամտի մեծության և դրա բաշխման վրա ներկայացված է Գրաֆիկ 66-ում: Հորիզոնական առանցքը արտահայտում է երկու երկրներում՝ A և B, աշխատուժի ընդհանուր քանակը, իսկ ուղղահայաց առանցքները՝ համապատասխան երկրի աշխատավարձները: VMP ուղիղները բնութագրում են համապատասխան երկրում աշխատուժի սահմանային արդյունքի արժեքները: Ենթադրենք՝ երկրների միջև աշխատուժի սկզբնական բաշխումը կազմում է L_0, որի դեպքում աշխատավարձը A երկրում կազմում է w_{A0}, իսկ B երկրում՝ w_{B0}: Շեշտենք՝ A-ում B-ի համեմատ ավելի բարձր աշխատավարձը արդյունք է աշխատուժի ավելի բարձր սահմանային արտադրողականության:

Քանի որ դիտարկվող մոդելում շարժի միակ շարժառիթը տնտեսական է, ապա աշխատավարձի տարբերության պատճառով B երկրի աշխատուժի մի մասը կտեղափոխվի A երկիր, այնքան, մինչև աշխատավարձերը երկու երկրներում հավասարվեն: Հավասարակշռության նոր վիճակում աշխատուժի բաշխումը կկազմի L_1, քանի որ L_0L_1 միավոր աշխատուժ B երկրից տեղաշարժվում է A երկիր:

Գրաֆիկ 66: Աշխատուժի միջազգային շարժը



Աշխատուժի միջազգային շարժի շնորհիվ համաշխարհային արտադրությունն ընդլայնվում է EGJ եռանկյան չափով: Նշյալ աճը պայմանավորված է նրանով, որ L_0L_1 աշխատուժի յուրաքանչյուր միավորը A երկրում ավելի արտադրողական է, քան B-ում, որի վկայությունն է VMP մեծությունների տարբերությունը (L_0L_1 հատվածում $VMP_{LA} > VMP_{LB}$): Աշխատուժի ներգաղթի հետևանքով A երկրի կապիտալի սեփականատերերը շահում են, քանի որ կապիտալի արտադրողականությունը աճում է: Այսպես՝ A երկրում թողարկված արդյունքը, ներգաղթի արդյունքում, ընդլայնվում է EGL_1L_0 տիրույթի չափով, որից FGL_1L_0-ն ներգաղթածների աշխատավարձն է, իսկ մնացածը՝ EGF, կապիտալի վճարը: Նկատենք, որ $FGHJ$-ն ներգաղթի արդյունքում ներգաղթածների աշխատավարձի զուտ աճն է: Սակայն A-ում նախքան ներգաղթը գտնվող աշխատուժը տուժում է, քանի որ այդ աշխատուժի վարձատրությունը նվազում է $w_{A0}EFw_{A1}$ տիրույթի չափով:

B երկրում թողարկված արդյունքը կրճատվում է JGL_1L_0 տիրույթի չափով, ընդ որում B երկրում կապիտալի սեփականատերերը կորցնում են JGH եռանկյան չափով, քանի որ աշխատուժի արտագաղթի հետևանքով կապիտալի արտադրողականությունը նվազում է: Սակայն B երկրում մնացած աշխատուժը շահում է $Gw_{B1}w_{B0}H$ տիրույթի չափով, քանի որ աշխատավարձն աճում է:

Կապիտալի միջազգային շարժը

Կապիտալի շարժի ազդեցությունը ընդհանուր առմամբ մոտ է աշխատուժի շարժի ազդեցությանը: Էական տարբերությունը նրանում է, որ կապիտալի շարժի դեպքում ռեսուրսի տերը կարող է չտեղափոխվել:

Այսպես, երբ կապիտալի գնի տարբերության ($r_{A0} > r_{B0}$) պատճառով K_0K_1 քանակի կապիտալ B-ից տեղաշարժվում է A երկիր, ապա այդ կապիտալի սեփականատերերը կարող են մնալ B երկրում: Այդ դեպքում տեղաշարժված կապիտալի վարձատրությունը (FGK_1K_0) պատկանում

Գրաֆիկ 67: Կապիտալի միջազգային շարժը



է B երկրին: Հետևաբար A երկիրը շահում է միայն EGF եռանկյան տիրույթի չափով, որն արտահայտում է A երկրում աշխատուժի արտադրողականության աճը:

Արդյունքում՝ կապիտալի ներհոսքի դեպքում A երկրի «տեղական» կապիտալի սեփականատերերը կորցնում են, քանի որ կապիտալի գինը A-ում կրճատվում է, իսկ աշխատուժը շահում է: B երկրի աշխատուժը, ընդհակառակը, կապիտալի արտահոսքի պատճառով կորցնում է, քանի որ կրճատվում է նրա արտադրողականությունը, թեպետ B երկրում մնացած կապիտալը շահում է՝ B-ում կապիտալի գնի բարձրացման հետևանքով:

Աղյուսակ 10. Եկամտահարկի և շահութահարկի առավելագույն դրույքաչափերը

	Եկամտահարկ	Շահութահարկ
Վրաստան	12	20
Ռուսաստան	13	24
Ուկրաինա	13	25
Լիբիա	15	40
Հոնգ Կոնգ	16	17.5
Հայաստան	20	20
Եգիպտոս	20	20
Էստոնիա	23	0
Լատվիա	25	15
Կիպրոս	30	10
Չեխիա	32	24
Ադրբեջան	35	22
Իրան	35	25
ԱՄՆ	35	35
Ֆինլանդիա	32.5	26
Ճապոնիա	37	30
Հունգարիա	38	16
Թուրքիա	35	30
Լեհաստան	40	19
Մեծ Բրիտանիա	40	30
Հունաստան	40	29
Շվեյցարիա	41.5	25
Իտալիա	43	33
Գերմանիա	44.3	26.4
Իսպանիա	45	35
Ֆրանսիա	48.1	33.8
Կուբա	50	35
Հոլանդիա	52	29.6
Շվեդիա	60	28
Չադ	65	45

Աղբյուրը՝ 2007 Index of Economic Freedom, The Heritage Foundation,

Գործոնային եկամուտների հարկումը

Գրեթե բոլոր երկրներում եկամուտները հարկվում են: Ըստ Heritage Foundation-ի՝ 156 երկրներից, որոնց վերաբերյալ առկա են տվյալներ, եկամտահարկի ու շահութահարկի զրոյական դրույքաչափ ունեն 6 երկիր՝ ԱՄԷ-ն, Սաուդիան Արաբիան, Կատարը, Քուվեյթը, Բահրեյնը, Բահամները: Եվս երկուսում՝ Օմանում, Ուրուգվայում, զրոյական է միայն եկամտահարկի դրույքը, իսկ Էստոնիայում զրոյական է շահութահարկի դրույքը: Հայաստանում և՛ շահութահարկի, և՛ եկամտահարկի առավելագույն դրույքները կազմում են 20%:

Ինչպես ներկայացվեց վերը՝ ռեսուրսների միջազգային շարժը պայմանավորված է վարձատրության տարբերությամբ: Ընդ որում, երբ վարձատրության տարբերությունը պայմանավորված է արտադրողականությունների տարբերությամբ, ապա ռեսուրսների միջազգային շարժը ընդլայնում է համաշխարհային արտադրությունը: Սակայն, վարձատրության տարբերությունը կարող է պայմանավորվել նաև հարկման դրույքների տարբերությամբ: Օրինակ՝ եկամտահարկի առավելագույն դրույքը Ռուսաստանում 13% է, իսկ Ադրբեջանում՝ 35%: Հետևաբար, այլ հավասար պայմաններում, այդ թվում, երբ արտադրողականությունները նույնն են, աշխատուժը Ադրբեջանից Ռուսաստան տեղափոխվելու դեպքում շահում է: Սակայն, արդյո՞ք հարկման դրույքների տարբերությամբ պայմանավորված միջազգային շարժը ընդլայնում է համաշխարհային արտադրությունը:

Գրաֆիկ 68-ում աշխատուժի L_0 բաշխումը երկու երկրների միջև արդյունավետ է, քանի որ արտադրողականությունների տարբերությամբ պայմանավորված տեղաշարժերը արդեն տեղի են ունեցել: Ենթադրենք՝ A երկիրը սահմանում է եկամտահարկ՝ t_A դրույքով ($0 < t_A < 1$): Արդյունքում, քանի որ նախքան հարկի սահմանումը աշխատավարձը կազմում էր w_{A0}, ապա հարկի սահմանումից հետո աշխատավարձը, հարկը վճարելուց հետո, կկազմի $w_{A0}(1 - t_A)$: Այսինքն՝ հարկման հետևանքով A երկրի աշխատուժը թեպետ նախկինի պես վարձատրվում է w_{A0}, սակայն, զուտ աշխատավարձը՝ հարկերը վճարելուց հետո, կազմում է $w_{A0}(1 - t_A)$: Վերջինս ցածր է B երկրում աշխատուժի վարձատրությունից՝ w_{B0}, և, հետևաբար, L_0L_1 քանակի աշխատուժ շահավետ կհամարի A երկրից տեղափոխվել B՝ հարկումից խուսափելու նպատակով: Նկատենք, որ աշխատուժի արտահոսքը շարունակվում է այնքան, մինչև երկու երկրներում աշխատավարձերը դարձյալ հավասարվում են:

Շեշտենք, որ աշխատուժը դարձյալ տեղաշարժվում է աշխատավարձերի տարբերության պատճառով, սակայն, այդ տարբերությունը պայմանավորված է ոչ թե արտադրողականությունների, այլ հարկման դրույքների տարբերությամբ: Տեղաշարժվող աշխատուժը անվերապահորեն շահում է. հակառակ դեպքում այն չէր տեղաշարժվի: Համաշխարհային տնտեսության տեսանկյունից, սակայն, L_0L_1 աշխատուժի տեղաշարժը արդյունավետ չէ, քանի որ տեղաշարժվող աշխատուժի յուրաքանչյուր միավոր B երկրում նվազ արտադրողական է, քան A-ում (L_0L_1 հատվածում $VMP_{LB} < VMP_{LA}$): Հարկման պատճառով համաշխարհային արտադրանքի կորուստը հավասար է EGJ եռանկյան

Գրաֆիկ 68: Աշխատուժի հարկման ազդեցությունը



մակերեսին, քանի որ ռեսուրսի տեղաշարժի հետևանքով A-ում թողարկումը կրճատվում է EGL_0L_1 չափով, իսկ B-ում այն ընդլայնվում է JGL_0L_1 չափով:

Հավասարակշռության նոր վիճակում A-ում մնացած աշխատուժի աշխատավարձը նախքան հարկի վճարումը կազմում է w_{A1}, իսկ հարկի վճարումից հետո՝ $w_{A1}(1-t_A)$: Վերջինս թեպետ ցածր է աշխատավարձի նախկին մակարդակից՝ w_{A0}, սակայն ավելի ցածր կլիներ, եթե L_0L_1 քանակի աշխատուժը չարտագաղթեր. այդ դեպքում աշխատավարձը կկազմեր $w_{A0}(1-t_A)$: Աշխատուժի արտահոսքի հետևանքով A երկրի կապիտալի արտադրողականությունը նվազում է և կապիտալի սեփականատերերի վնասը կազմում է EGF: Միևնույն ժամանակ A երկրում եկամտահարկից պետական բյուջե մուտքերը կազմում են $w_{A1}EJw_{A1}(1-t_A)$: Նշենք, որ աշխատուժի արտագաղթելու հնարավորությունը սահմանափակում է բյուջեի հարկային եկամուտները. եթե աշխատուժը չարտագաղթեր, ապա հարկային եկամուտները կկազմեին $w_{A0}GM\,w_{A0}(1-t_A)$:

B երկրի «տեղական» աշխատուժը կորցնում է $Gw_{B0}w_{B1}H$ տիրույթի չափով, քանի որ աշխատուժի ներհոսքի պատճառով աշխատավարձը կրճատվում է: Սակայն, շահում են B երկրի կապիտալի սեփականատերերը, քանի որ լրացուցիչ աշխատուժը բարձրացնում է կապիտալի արտադրողականությունը. շահը հավասար է JGH եռանկյան մակերեսին:

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսության տեսանկյունից հարկման դրույքների տարբերությամբ պայմանավորված ռեսուրսների տեղաշարժը անարդյունավետ է:

Դիտարկված տարբերակում եկամուտը հարկվում էր միայն մեկ երկրում, թեպետ, եզրահանգումները կլինեին նույնը, եթե եկամուտը հարկվեր նաև մյուս երկրում: Նկատենք՝ այդ դեպքում աշխատուժի տեղաշարժը կախված կլիներ երկու երկրներում հարկման դրույքների տարբերությունից:

Արտասահմանում ստացված եկամուտները որոշ դեպքերում ենթակա են կրկնակի հարկման. նախ եկամտի ծագման երկրում, այսինքն այն երկրում, որում ստացվել է եկամուտը, իսկ ապա այն երկրում, որի ռեզիդենտն է եկամտի սեփականատերը:

Ռեզիդենտ տերմինի լիակատար մեկնաբանությունը կտանք հետագայում, սակայն մեր ներկա նպատակների համար բավարար է ասել, որ ֆիզիկական անձը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է, իսկ իրավաբանական անձը՝ որտեղ իրականացնում է իր գործունեությունը:

Այսպես՝ օրինակ ռուսական ընկերությունները Հայաստանում ներդրումներ կատարելու դեպքում, կարող են այդ ներդրումներից ստացված եկամուտներից հարկ վճարել նախ Հայաստանում, իսկ ապա, եկամուտները հայրենադարձնելու, այն է՝ Ռուսաստան փոխանցելու դեպքում: Դրանով իսկ կստացվի՝ միևնույն եկամուտը հարկվում է երկու անգամ, նախ Հայաստանում, ապա Ռուսաստանում, ինչն էապես կխոչընդոտի Ռուսաստանից Հայաստան ներդրումների ներհոսքին: Այդ իսկ պատճառով Հայաստանի ու Ռուսաստանի միջև գործում է կրկնակի հարկումից խուսափելու համաձայնագիր:

Ավելին, Հայաստանը նման համաձայնագրեր է ստորագրել նաև 40 այլ երկրների հետ. ԱՄԷ, Ավստրիա, Բելառուս, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Եգիպտոս, Էստոնիա, Թաիլանդ, Թուրքմենստան, Ինդոնեզիա, Իռլանդիա, Իտալիա, Իրան, Լատվիա, Լեհաստան, Լիբանան, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Կանադա, Կատար, Հնդկաստան, Հոլանդիա, Հունաստան, Հունգարիա, Ղազախստան, Ճապոնիա, Մոլդովա, Շվեդիա, Շվեյցարիա, Շրի Լանկա, Չինաստան, Ռումինիա, Սիրիա, Սլովենիա, Վրաստան, Տաջիկստան, Ուկրաինա, Ֆինլանդիա, Ֆրանսիա (նշված որոշ երկրների հետ համաձայնագրերը գտնվում են ստորագրման կամ վավերացման փուլում):

Իսկ ընդհանուր առմամբ, ըստ UNCTAD-ի, 2002թ-ի դրությամբ 176 երկրների միջև գործում էր կրկնակի հարկումից խուսափելու 2,256 համաձայնագիր:

Հիմնականում կիրառվում են կրկնակի հարկումից խուսափելու համաձայնագրերի երկու տիպային տարբերակներ: Մեկը՝ մշակված OECD-ի կողմից, առավելությունը տալիս է եկամուտ ստացողի ռեզիդենտությանը, այսինքն՝ հարկը վճարվում է այն երկրում, որի ռեզիդենտն է տվյալ ընկերությունը: Նման համաձայնագրերը, բնականորեն, շահեկան են Զարգացած երկրների համար, քանի որ կապիտալի հիմնական արտահանողները հենց Զարգացած երկրներն են: Մյուս տարբերակը, մշակված ՄԱԿ-ի կողմից, առավելությունը տալիս է եկամտի ծագման երկրին և շահեկան է Զարգացող երկրների համար, քանի որ հարկը վճարվում է այն երկրում, որում ստացվել է այդ եկամուտը: Ներկայումս գործող համաձայնագրերի բացարձակ մեծամասնությունը, սակայն, հիմնված է OECD-ի տարբերակի վրա: Փաստորեն Զարգացող երկրները կամովին հրաժարվում են հարկել օտարերկրյա ընկերությունների ներդրումներից ստացված եկամուտները՝ դրա դիմաց ակնկալելով օտարերկրյա ներդրումների ընդլայնում: Էրիկ Նյումեյերի հետազոտությունը 2006թ–ին պարզեց, որ ԱՄՆ–ի հետ կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագիր ստորագրած երկրներում ամերիկյան ներդրումները իսկապես ավելին են:

Կրկնակի հարկումից խուսափելու համաձայնագրերում կիրառվում են երեք հիմնական տարբերակներ՝ հրաժարում հարկումից, հարկային վարկ և հարկային նվազեցում: Հարկային վարկի դեպքում երկիրը իր ռեզիդենտի հարկային պարտավորությունները կրճատում է արտերկրում վճարված հարկի ամբողջական դրույքաչափով: Իսկ հարկային նվազեցման դեպքում հարկման ենթակա եկամտից հանվում է արտերկրում հարկված գումարը: Փաստորեն հարկային վարկի դեպքում եկամուտը լիովին ազատվում է կրկնակի հարկումից և հարկվում է երկրներից երկուսի առավել բարձր դրույքով: Հարկային նվազեցման դեպքում եկամուտները կրկնակի հարկումից խուսափում են միայն մասամբ: Իսկ հարկումից հրաժարման դեպքում երկիրը ընդհանրապես հրաժարվում է իր ռեզիդենտի արտասահմանում ստացած եկամտի հարկումից: